

չարագլուխ սատանան ինծի կը հակառակի: Բայց կը յուսամ մեր Տիրոջմէն, Յիսուս Քրիստոսէ, որ ըսաւ՝ ով որ խնդրէ պիտի գտնէ՝ թէ բարեխօսութեամբ Ս. Աստուածածնին եւ աղօթքներով Ս. Քահանայապետներուն, Սեղբեստրոսի եւ Գրիգորի, պիտի ճզմեմ հակառակող սատանային գլուխը, եւ պիտի դամ համբուրելու Գլխաւոր Առաքելոց սուրբ մասունքները եւ ողջունելու Եկեղեցւոյ Կենդանի եւ սուրբ Պետրոսը:»

«Այս բոլորին համար ողջ լեր չընորհօքն Աստուծոյ Ամենակալին:»

«Գրեցաւ յամի 1128 կամ 1679 յաւուր 23դում Նոյեմբերի ի 4. Պոլիս առ Դրանն Ս. Աստուածածնիս:»

ԿՆԻՔ

Նամակին վրան գրուած է. «Առ ձեռս Առաքելի Վ.ի, Հոռոմ կամ ալլուր ուր ալ գտնուի:»

Զարմանալի է որ Յակոբ Զուղայեցի իր այս խիստ կարեւոր նամակը գրած ըլլայ այդքան անորոշ հասցէով, այսինքն «Առաքելի վարդապետի, Հոռոմ կամ ալլուր ուր ալ գտնուի»: Բացորոշ կերպով նամակը յանձնելի չէ ուրիշ որեւէ մէկուն բացի Առաքել վարդապետէն: Այսպէսով միայն Առաքել վարդապետ կրնար նամակը ստացած ըլլալ եւ մէջտեղ հանողը ըլլալ: Առաքել կը ջանար իր սաղմին մէջ խեղդել իր կատարելիք Կեղծիքը իբր կեղծիք: Այսինքն քանի որ ինքը պիտի պատրաստէր նամակը պէտք էր այնպէս մը հասցէագրուեր նամակը որ իր կողմէն ալ մէջտեղ հանուած ըլլալը արդարացուէր: Սակայն Առաքել կ'երեւի չխորհեցաւ թէ կրնան հարցնողներ ըլլալ թէ ինչո՞ւ Յակոբ Դ. երբ Հոռոմ կը գրէր, մանաւանդ երբ իբր թէ դաւանական այսքան կարեւոր պարունակութեամբ նամակ մը, Առաքելի կը գրէր եւ ոչ թէ Հաւատոյ Տարածման Ժողովին կամ նոյն իսկ Պապին: Նամակին պարունակութիւնը Հոռոմի իր հնազանդութեամբ, Հոռոմէ գաւազանութեան իր չկրնանալ գալու արդարացողմներով, անտարակոյս աւելի պատ-

շաճ կ'ընէին անոր ուղարկուիլը Պապին կամ Հաւատոյ Տարածման Ժողովին եւ ոչ թէ Առաքելին:

Բայց կարեւոր է որ մենք հոս նախ ներկայացնենք նամակին ստացող ներկայացուած Առաքել վարդապետը: Հաւատոյ Տարածման Ժողովին Դիւանը սա գրանցուած ունի նամակին ստացման առթիւ: «Այս է թարգմանութիւնը (լատիներէն) այն նամակին, զոր գրեց Յակոբ Հայոց Կաթողիկոսը, որ կը կոչուի Պատրիարք Մեծ Հայքի, առ Առաքել Արքեպիսկոպոս Նախիջեւանի:»

Առաքել, որ բնիկ Շոռոթեցի էր, կ'ըսուի կոչուած է նաեւ Բապիկ: Մեռած է Հոռոմ եւ Հոռոմի հոռոմէագաւան Հայոց Ս. Մարիամ Եղիպտացի եկեղեցւոյն մէջ թաղուած է: Ունի տապանագիր, որուն մասին մենք յետոյ իր կարգին պիտի խօսինք: Տապանագիրը հրատարակած է Հ. Ղ. Ալիշան ՍԻՍԱԿԱՆԻ մէջ (էջ 352) առաջին անգամ եւ յետոյ ալ Հայր Գալէմքեարեան Հանդէս Ամսօրեայի մէջ (1914, էջ 709-710): Տապանագրին համաձայն Առաքել մեռած է վեց Օգոստոս 1680-ին երբ 67 տարեկան էր: Ուրեմն ծնած է 1613-ին ատենները: Իր ծնողաց եւ պարագաներուն մասին տեղեկութիւն կը պակասի: Նոյն տապանագրին լատին արձանագրութիւնը կը յիշէ զայն 1648-ին իբր վարդապետ եւ եպիսկոպոս, երբ ուրեմն հաղիւ 35 տարեկան կար ան:

Ս. Ղազարի հաւաքածոյին թիւ 23 Աստուածաշունչը (Հ. Սարգիսեանի ցուցակ) ունի 1653 թուականով սա յիշատակութիւնը. «Առաքել անուամբ կոչեցեալ վարդապետ եւ գործով յոյժ հեռի, ծառայից ծառաս Տեառնս ընդ սմա (Փիլիպպոս Աղբակեցի Էջմիածնայ Կաթողիկոս) գորով ի սպասաւորութիւնս յամենայն ուրեք, որ եմս երկրու Նախիջեւանու, ի Շոռոթ գեղջէ:» Իր մասին կը յիշուի սր 1652-ին Երուսաղէմի Ժողովին կը մասնակցէր: Ուրեմն Առաքել հաւանաբար վարդապետական դաւազան ստացաւ Փիլիպպոս Աղբակեցիէ:

Դարձեալ 1648-ին, ըստ տապանագրին, Եպիսկոպոս է Ս. Կարապետի: Սակայն նոյն տապանագրին հայերէն